
ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԻՏԱԿԱՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Անահիտ Նալբանդյան

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի

և իրավունքի ինստիտուտի հայցորդ

Համառոտագիր: Սույն հոդվածում հանգամանորեն քննարկվում են նախադեպային իրավունքի և դատական պրակտիկայի հիմնախնդիրների հետազոտության ժամանակակից գիտական մեթոդաբանության հարցերը:

Ցանկացած իրավական աղբյուրի, այդ թվում՝ դատական նախադեպի և դատական պրակտիկայի ուսումնասիրության հաջողությունը պայմանավորված է ճիշտ ընտրված մեթոդաբանությամբ, այսինքն՝ այն եղանակների, միջոցների, հնարքների հանրագումարը, որի շնորհիվ բացահայտվում են հետազոտվող օբյեկտի էությունն ու բովանդակությունը:

Բանալի բառեր. մեթոդաբանություն, մեթոդներ, դատական նախադեպ դատական պրակտիկա, իրավական աղբյուր, գիտականություն, հետազոտության օբյեկտ:

Իրավաբանական գիտության զարգացման գործընթացին ներհատուկ են՝ ինչպես քանակական, այնպես էլ որակական փոփոխությունները:

Իրավաբանական գիտելիքի քանակական փոփոխությունները (դրա բազմապատկումը, հստակեցումը և կոնկրետացումը, ծավալի մեծացումը) տեղի են ունենում ամբողջությամբ իրավունքի այս կամ այն հասկացության դիրքերից և սահմաններում, որն ընկած է իրավագիտության որոշակի հայեցակարգի, դրա մեթոդի ու առարկայի հիմքում:

Իրավաբանական գիտելիքի որակական փոփոխությունները կապված են իրավունքի՝ նախկին հասկացությունից իրավունքի նոր հասկացությանն անցման, համապատասխան նոր մեթոդով և նոր առարկայով, նոր իրավաբանական տեսության ձևավորման հետ¹:

Իհարկե, նման որակական փոփոխությունների աստիճանը կարող է լինել տարբեր, սակայն նոր հասկացություններն իրավաբանական գիտական ճանաչողության զարգացման գործընթացում և իրավաբանական մտքի առաջընթացի մեջ արտահայտում են որակական թռիչք:

Իրավունքի նոր հասկացությունը նշանակում է նաև համապատասխան նոր մոտեցում ինչպես իրավաբանական գիտության օբյեկտների (իրավունքի և պետության), բուն էմպիրիկ տվյալների, այնպես էլ դրանց մասին արդեն կուտակված տեսական գիտելիքների ուսումնասիրման, ըմբռնման ու մեկնաբանման նկատմամբ:

Բանն այն է, որ չկա անփոփոխ իմաստ ունեցող գիտելիք, չկա գիտելիքի իմաստի ինչ-որ մի մշտական միավոր, չկա մաքուր գիտելիք՝ դրա իմաստաստեղծ համատեքստից դուրս ինքնին գիտելիք, չկա մեկուսացված, ինքնավար գիտելիք՝ մինչ, դուրս և առանց այս կամ այն արդեն ճանաչողականորեն տված գիտելիքների համակարգից՝ այդ գիտելիքի իմաստավորման որոշակի տիպով, դրա հասկացության որոշակի հայեցակարգով:

Ցանկացած գիտելիք (ներառյալ նաև իրավունքի և պետության մասին գիտելիքը) գոյություն ունի հասկացականորեն կապված, բեկված, միջնորդավորված, դասակարգված ձևափոխված ու վերափոխված տեսքով, այսինքն՝ որպես տեսության (դրա առարկայի և մեթոդի) որոշակի հասկացության ու համապատասխան հայեցակարգի բաղկացուցիչ մաս (դրվագ):

Այստեղից պարզ է, որ մեկ տեսության գիտելիքները չեն կարող ուղղակիորեն և անմիջականորեն ներառվել նոր տեսության կառուցվածքում, որն իրենից ներկայացնում է գիտելիքների նոր հասկացականորեն և հայեցակարգային մոտեցումների որոշակի համակարգ (այսինքն՝ գիտելիքների համակարգ, որոնք իմաստավորված ու որոշակիացված են նոր հասկացության տեսակետից)²:

Մեկ իրավաբանական տեսության գիտելիքներն այլ իրավաբանական տեսության շրջանակներում օգտագործելու համար անհրաժեշտ է տվյալ տեսության ստեղծման

¹ Տե՛ս **Ներսեսյանց Վ.Ս.**, Իրավագիտություն: Իրավունքի և պետության ընդհանուր տեսության դասընթացի ներածություն, Երևան, 2002, էջ 112-113:

² Տե՛ս **Хачатуров Р.Л., Липинский Д.А.**, Теория государства и права. Курс лекций. Тольятти, 2008, էջ 12-13:

գործընթացում այդ գիտելիքներն ազատել դրանց նախկին հասկացական-իմաստային համատեքստից (քանդել իրավունքի նախկին հասկացության հետ այդ գիտելիքի իմաստային կապերը), դրանք փոխադրել նոր հասկացական-իմաստային հարթություն, իմաստավորել և սահմանել նոր հասկացության դիրքերից՝ որպես դրա իմաստային բաղադրատարրեր, դրանք ներառել նոր տեսության հասկացական համակարգում:

Իրավունքի նոր հասկացությունը, ինչպես և այլ գիտություններում ցանկացած նոր հասկացություն, որակական թռիչք է իրավաբանական իմացության մեջ:

Իրավունքի նոր հասկացության ձևակերպումը (բացահայտումը, հայտնագործումը) ճանաչվող օբյեկտի յուրօրինակ ստեղծագործական ջանքերի ոչ համաչափ արդյունք է, ընդ որում՝ նախօրոք անհնար է կանխագուշակել, թե հենց ինչպիսին կլինի իրավունքի սպասվելիք նոր հասկացությունը, և ինչպես դա բացահայտել, հայտնագործել և, վերջապես, իմաստավորել:

Նորաբանությունը³ (նորի մասին ուսմունքը) կարող է շատ հետաքրքիր և ուսանելի բան ասել այն մասին, թե ինչպես են կատարվել հայտնագործությունները մարդկային ճանաչողության տարբեր բնագավառներում, նորի ստեղծման բնույթի և տարբեր հարադրություններում, նորի ու հնի հարաբերակցության և այլնի մասին: Նորաբանության նման դրույթները՝ իրենց ամբողջ ճանաչողական, մեթոդաբանական և տեսաբանական նշանակությամբ հանդերձ, նկատի ունեն արդեն հայտնի նորի (արդեն կատարված հայտնագործությունների), այլ ոչ թե դեռևս անհայտ ապագայի (գալիք նորի) փորձը: Այդ իմաստով՝ ինչ-որ իրականում նոր է (ապագան, դեռևս չհայտնագործված նորը), մնում է անհայտ մինչև այն պահը, քանի դեռ այն իրականություն չի դարձել: Անհայտ է մնում ինչպես բուն այդ գալիք նորը, այնպես էլ, իհարկե, դրա հայտնագործման կոնկրետ բուն եղանակը, մեթոդաբանական մոտեցումը: Նույնիսկ հայտնագործողները հաճախ չգիտեն, թե ինչպես է դա իրենց հաջողվել, և հաճախ վկայակոչում են երջանիկ դեպքը (Արքիմեդի լոգարանը, Նյուտոնի խնձորը և այլն): Այնպես որ, չկան և սկզբունքորեն չեն կարող լինել նորի հայտնագործման համար ձևակերպված կանոններ, այն բանի մասին մեթոդիկա, թե կոնկրետ ինչպես ու հենց ինչպիսի նոր հայտնագործում անել: Հակառակ դեպքում կստացվեր՝ իբր արդեն նախօրոք հայտնի է այն նորը, որն էլ դեռևս մնում է անհայտ:

³ Մանրամասն տե՛ս Стандарты научности и homo juridicus в свете философии права. Отв. ред. **В.Г. Графский.**, Изд-во «Норма» М., 2011.

Բերված նորաբանական նկատառումները թույլ են տալիս իրավաբանական տեսության ձևավորման և զարգացման գործընթացում կոնկրետացնել իրավունքի նոր հասկացության տեղի ու դերի ըմբռնումը: Նորաբանական տեսակետից իրավաբանական գիտության պատմությունն իրավունքի նոր հասկացությանների և դրանց հիման վրա ձևավորվող նոր տեսությունների և հայեցակարգային մոտեցումների պատմություն է:

Սակայն իրավաբանական գիտելիքի զարգացման մեջ նորույթի պահը սերտորեն կապված է հաջորդականության գործընթացի հետ: Այստեղ նորը (իրավունքի նոր հասկացությունը, նոր տեսությունը, նոր հայեցակարգը), ինչպես և ամենուր, ծագում է միայն հնի՝ նախկին իրավաբանական գիտելիքների քննական վերլուծությունների արդյունքների ամբողջ հանրագումարի հիման վրա որպես իրավունքի ու պետության ըմբռնման և հասկացման ճանաչողականորեն առավել խոր, առավել բովանդակային ու առավել համարժեք ձև: Եվ իրավունքի նոր հասկացությունը չի վերացնում իրավունքի նախկին հասկացություններն ու համապատասխան տեսությունները, այլ դիալեկտիկորեն հանում է դրանք, այսինքն՝ հաղթահարում դրանց սահմանափակ և հնացած ճանաչողական ձևը (հաղթահարում է նախկին հասկացության սահմանափակ ճանաչողական հնարավորություններն ու սահմանները) և, միաժամանակ, պահպանում դրանց տեսական-ճանաչողական իմաստն ու արդյունքները: Դրանով իսկ իրավունքի նոր հասկացությունը պահպանում է նախկին իրավաբանական մտքի գիտականորեն նշանակալի արդյունքները և իրավաբանական ճանաչողության նոր, առավել բարձր մակարդակում զարգացնում է դրանք առավել խոր տեսական դիրքերից ու առավել լայն և համարժեք իմաստային առումով ու համատեքստում⁴:

Այս առումով՝ իրավաբանական տեսության առաքելությունն է իրավական իրականության գիտական բացատրությունը, պարզաբանումը, կանխատեսումը և նախագծումը: Որպեսզի գիտական աշխարհում ինչ-որ իրադարձություն լինի, բավարար չէ միայն հետազոտության օբյեկտի տեսական նկարագրումը, բացատրումը, այլև անհրաժեշտ է փնտրել գտնել նախորդներին, համախոհներին, ընդդիմախոսներին, այսինքն՝ ներգրավել կենդանի գիտական կյանքի որոնումներում, շփվել գիտական ավանդույթների և ձեռքբերումների հետ և հետո միայն ազդարարել հեղինակի

⁴ См. **Сырых В.М.**, Теория государства и права, М., 2004, էջ. 22-23:

դիրքորոշումը, ինչը հնարավոր է միայն փորձաքննության անցած մեթոդաբանության և նոր ձևավորված մեթոդների զուգորդված օգտագործումով:

Ժամանակակից իրավունքի տեսությունում կիրառվում են ինչպես ավանդական (դասական) մեթոդները՝ վերլուծություն, համադրում, համեմատում, սինթեզ և այլն, այնպես էլ նոր մեթոդներ՝ սինեգետիկա, հերմենևտիկա, իրավաբանական եզրույթների ստուգաբանություն, իրավական երևույթների կանխատեսում, իրավակլան երևույթների (օրինակ՝ իրավակարգավորումների) արդյունավետության չափորոշումների սահմանում և կանխատեսում և այլն:

Իրավաբանական մեթոդը՝ իր բոլոր գործառույթներում և դրսևորումներում, հնարավորություն է տալիս նաև բացահայտել դատական նախադեպի և դատական պրակտիկայի էությունը և բովանդակային առանձնահատկությունները:

Հայաստանի Հանրապետությունում ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպերը, որպես կանոն, կրում են իրավամեկնողական բնույթ (ի տարբերություն դասական անգլո-սաքսոնական նախադեպի), լրացնում են իրավունքի բացերը, վերացնում են իրավական անորոշությունները և հակասությունները, ինչպես նաև օրինակելի են առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների համար:

Ինչ վերաբերում է դատական պրակտիկային, ապա դրա նյութերը հրապարակվում են Վճռաբեկ դատարանի պալատների, որոշումների տարեկան ժողովածուներում, որոնք առայժմ կրում են զուտ տեղեկատվական բնույթ, բացակայում են վերլուծական պարզաբանման և ամփոփման նյութերը, և, ըստ էության, դրանց տեսական ու գործնական նշանակության աստիճանը ցանկալի կլինի, որ ավելի էական արտահայտվի:

Մեր կարծիքով, դրանց գործնական-կիրառական նշանակությունն էապես կբարելավվի, եթե օրենսդրական մակարդակով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով կատարվի համապատասխան լրացում կամ փոփոխություն՝ մտցնելով Վճռաբեկ դատարանի գործառութային մասով «պլենումի» (դատավորների համաժողովի) ինստիտուտը, որը ոչ միայն կամփոփի տարվա (կամ կես տարվա) դատական պրակտիկայի նյութերը, այլև պարզաբանումներ կամ մեկնաբանություններ կտա օրենսդրական նորմերի գործադրության, դատական նախադեպերի կիրառման հարցերի վերաբերյալ:

Կատարված վերլուծության արդյունքների հիման վրա՝ կարելի է հանգել հետևյալ

Եզրակացության՝ դատական նախադեպային իրավունքի և դատական պրակտիկայի ժամանակակից գիտական ու մեթոդաբանական մոտեցումներն են. նախադեպերի քննական և իրավահամեմատական վերլուծությունը, համակարգային վերլուծությունը՝ որոշակի ժամանակահատվածի (վեց ամսվա, մեկ տարվա) կտրվածքով, դատական պրակտիկայի նյութերի ամփոփում՝ ըստ դատավարական ոլորտի, և արդյունքների հրապարակում՝ որպես օրինակելի մոտեցումների:

СОВРЕМЕННЫЕ НАУЧНО-МЕТОДИЧЕСКИЕ ПОДХОДЫ К ИССЛЕДОВАНИЮ ПРЕЦЕДЕНТНОГО ПРАВА И СУДЕБНОЙ ПРАКТИКИ.

Анаит Налбандян

Соискатель Института Философии, социологии
и права Национальной академии наук РА

В данной статье подробно рассматриваются вопросы, связанные с современной научной методологией исследования проблем прецедентного права и судебной практики.

Успех исследования любого источника права, в том числе судебного прецедента и судебной практики, зависит от правильно выбранной методологии, то есть совокупности способов, средств, приемов, благодаря которым раскрываются сущность и содержание объекта исследования.

Ключевые слова. методология, методы, судебный прецедент, судебная практика, источник права, научность, объект исследования.

MODERN SCIENTIFIC AND METHODOLOGICAL APPROACHES TO CASE LAW AND JUDICIAL PRACTICE RESEARCH

Anahit Nalbandyan

Applicant of the Institute of Philosophy,

*Sociology and Law at the National Academy of Sciences
of the Republic of Armenia*

This article thoroughly discusses the issues related to the modern scientific methodology of researching the problems of case law and judicial practice.

The success of the study of any legal source, including judicial precedent and judicial practice, depends on the correctly chosen methodology, that is, the sum of the ways, means, tricks, thanks to which the essence and content of the object of research are revealed.

Keywords. methodology, methods, judicial precedent, judicial practice, source of law, scientific character, object of research.

Հոդվածը գրախոսվել է՝ 28.06.2024թ.
Ներկայացվել է պաշտպանության՝ 03.07.2024թ.